ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի, Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտացված դպրոցի և Երևանի երաժշտական թիվ 13 մասնագիտացված դպրոցի միասնական խորհրդի նիստի

(հերթական հեռավար նիստը կայացել է 2026 թվականի օգոստոսի 27–ին):

Նիստին մասնակցում են խորհրդի 9-ը անդամներից8-ը,բացակա՝1(Լիանա Վարդանյան):

Նիստին, խորհրդակցական ձայնի իրավունքով, մասնակցում են Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի տնօրեն Ա. Սարգսյանը,Պ.Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտացված դպրոցի տնօրենի պարտականությունները կատարող Զ. Վարդանյանը, Երևանի երաժշտական թիվ 13 մասնագիտացված դպրոցի տնօրեն Ն. Մեհրաբյանը։

Օրակարգում՝

1. Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտացված դպրոցի 2025-2026ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի /պլանի/ կատարողականի քննարկում։
   /Զեկուցող՝ Զ. Վարդանյան/

2.Ա.Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի 2025-2026 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի /պլանի/ կատարողականի քննարկում։ /Զեկուցող՝ Ա.Սարգսյան/

3. Երևանի երաժշտական թիվ 13 մասնագիտացված դպրոցի 2025-2026 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի /պլանի/ II կիսամյակում կատարողականի քննարկում։ /Զեկուցող Ն. Մեհրաբյան/

4. Երևանի երաժշտական թիվ 13 մասնագիտացված դպրոցի ներքին կարգապահական կանոնների հաստատում։/Զեկուցող Ն. Մեհրաբյան/

Լսեցին՝ 1 (Պ. Չայկովսկու անվան երաժշտական մասնագիտացված դպրոցի 2025-2026 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի /պլանի/ ուստարում կատարված աշխատանքների մասին։ /Զեկուցող՝ Զ. Վարդանյան/)

Զեկուցող Զ. Վարդանյանը բանավոր կարգով, ներկայացրեց Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտացված դպրոցի 2025-2026 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի /պլանի/ տարվա ընթացքում կատարված աշխատանքները, նշեց հաստատության նվագախմբի ելույթի, շրջագայությունների մասին և բոլոր փաստաթղթերը տեղադրեց խորհրդի հաղորդագրությունների հարթակում։ Ինչպես նաև հավելեց, որ հաշվետվության մեջ ներառված են հաստատության բոլոր օղակների ղեկավարների, գրադարանավարի և հոգեբանի հաշվետվությունը։

Առաջնորդվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11–րդ հոդվածի 1–ին կետի 3-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքներիկատարողականի մասին մանկավարժական խորհրդի 2026թ. համապատասխան որոշումը և զեկուցողի ներկայացրած հաշվետվությունը, կառավարման խորհուրդը՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հավանության արժանացնել ներկայացված հաշվետվությունը։

Լսեցին՝ 2. (Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի 2025-2026 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի /պլանի/ ուստարում կատարված աշխատանքների հաշվետվության մասին։ /Զեկուցող՝ Ա. Սարգսյան/

Զեկուցողը կառավարման խորհրդին ներկայացրեց 2025-2026 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի /պլանի/ ուստարում կատարված աշխատանքների հաշվետվության մասին։ Ա. Սարգսյանը նշեց կատարված բոլոր աշխատանքների, սովորողների՝ այլ երկրներ ունեցած այցերի, օլիմպիադաների մասնակցությունների, հաղթանակների և ձեռքբերումների մասին։ տարբեր՝ ՀՀ և արտասահմանյան բուհերի ներկայացուցիչների հետ հանդիպումներ

Ինչպես նաև հավելեց, որ բոլոր փաստաթղթերը տեղադրվել է խորհրդի հաղորդագրությունների հարթակում։

Վերջում հավելեց , , որ կառավարման խորհրդի անդամ Լիանա Վարդանյանի բացակայությունը պայմանավորված է նրանով, որ նա այլևս չի համարվում Ֆիզմաթ դպրոցի ծնող։Ուստի ,գործող կարգի համաձայն ,նախատեսվում է կատարել կառավարման խորհրդի անդամի փոփոխություն։

Առաջնորդվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11–րդ հոդվածի 1–ին կետի 3-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքներիկատարողականի մասին մանկավարժական խորհրդի 2026թ. համապատասխան որոշումը և զեկուցողի ներկայացրած հաշվետվությունը, կառավարման խորհուրդը՝

ՈՐՈՇՈՒՄ Է

2. Հավանության արժանացնել ներկայացված հաշվետվությունը:

Լսեցին՝ 3

(Երևանի երաժշտական թիվ 13 մասնագիտացված դպրոցի 2025-2026 ուստարվա ուսունադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի (պլանի) ուստարում կատարված աշխատանքների մասին (զեկուցող՝ Ն. Մեհրաբյան):

Զեկուցող Ն. Մեհրաբյանը կառավարման խորհրդի անդամներին ներկայացրեց վերոնշյալ հաշվետվությունը, հավելեց, որ պահանջներծց բխած յուրաքանչյուր երկու ամիսը մեկ վերադասին ներկայացվում է ուսումնադաստիարակչական աշխատաների կատարողականը, ինչպես նաև այն տեղադրվում է համապատասխան հարթակներում: Ն. Մեհրաբյանը նշեց տարվա ընթացքում կատարված բոլոր միջոցառումների, վարպետաց դասերի այդ թվում նաև տարեվերջյան խոշորագույն միջոցառումների,՝ դպրոցի նվագախմբի ելույթների մասին:

Առաջնորդվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11–րդ հոդվածի 1–րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին մանկավարժական խորհրդի 24.08.2026թ.-ի թիվ 10 նիստի 1 որոշումը և տնօրեն Ն. Մեհրաբյանի կողմից ներկայացված հաշվետվությունը, կառավարման խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

Հավանության արժանացնել տնօրեն Ն. Մեհրաբյանի կողմից ներկայացված հաշվետվությունը:

Լսեցին 4. (Երևանի երաժշտական թիվ 13 մասնագիտացված դպրոցի ներքին կարգապահական կանոնների մասին, զեկուցող՝ Ն. Մեհրաբյան):

Ն.Մեհրաբյանը նշեց, որ հանրակրթության պետական չափորոշիչների համաձայն, հաստատությունում աշխատող երաժիշտ ուսուցիչների դրույքաչափում նախատեսվում է կատարել փոփոխություն.24 ժամի փոխարեն 20 ժամ՝՝մեկ հաստիքայն միավորի համար:Ուստի,դրանովպայմանավորված ,կատարվել են փոփոխություններ ներքին կարգապահական կանոններում:

Առաջնորդվելով «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջներով ,հիմք ընդունելով հաստատության տնօրենի զեկույցը, կառավարման խորհուրդը

Որոշում է

Հաստատել Երևանի երաժշտական թիվ 13 մասնագիտացված դպրոցի ներքին կարգապահական կանոնները: